ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան, Ն. Զարյան 27, հեռ. (+374 11) 518 201, էլ. փոստ՝ arabkir@yerevan.am

№ 25/01-25/26105 «29» 12 2020թ.

Ա/Ձ ԱՐՏՈՒՇ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն 40/22

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի միջև 18.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որի շրջանակներում ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո, պայմանագրի կողմերի միջև 07.02.2020թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:

05.10.2020թ. Երևանի քաղաքապետարանը, աշխատակիցների բազմաթիվ դժգոհությունների պատճառով, Ձեր կողմից մատակարարված ջրից մեկ շիշ՝ փակ վիճակում, 18.9լ տարողությամբ ուղարկել է փորձարկման՝ պարզելու ջրի որակական ցուցանիշները:

Ստացված առ 15.10.2020թ. փորձարկման N 2080 եզրակացության համաձայն, Ձեր կողմից մատակարարված ջուրը ՄԸԹ-ի անթույլատրելի քանակով, պսևդոմոնաս աէրոգինոզա, E.coli, էնտերոկոկկեր և աղիքային ցուպիկի մանրէների առկայությամբ չի համապատասխանում ՄՄ ՏԿ ԵԱՏՄ ՏԿ 044/2017-ով սահմանված նորմերին (փորձարկման արձանագրությունը կցվում է):

20

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ «Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա/ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, բ/ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ա.Մկրտչյանի 05.11.2020թ. թիվ 06/22064 գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, չի մատակարարվել նաև 0.5լ տարողությամբ շշալցված ջուրը, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի՝ 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն նշված չափաբաժնի մասով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

կատ. Գ.Հովհաննիսյան
հեռ.011-518-151